

تَبَيُّنٌ أَدُو

مَجَلَّةُ جَمْعِيَّةِ الْقَاهِرَةِ الْخَيْرِيَّةِ الْأَرْمِينِيَّةِ الْعَامَّةِ

ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԹԻՒՆ ԳԱՏԻՐԷԻ Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ

المدير المسئول ا. صاروخان - ١٥ شارع محمد الدين - تليفون ٥٥٦٣٦ - صندوق بريد ٧١٧ القاهرة

Զ . Տ Ա Ր Ի

Թ Ի Ի — 2-3

ՓԵՏՐ - ՄԱՐՏ 1962

Խմբագրական

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԻՆ ՄԱՍԻՆ

Գանիբեի Հ. Բ. Ը. Միության Վարչութիւնները, հաւասարիմ Միութեան կիսադարեան աւանդութեանց եւ ուղեկիծի սկրզբունցներուն, իրենյ գլխաւոր մտահոգութեան առարկան ըրած են մեր երիտասարդութիւնը, մանաւանդ ուսանողութիւնը. որ օտար վարժարաններու ապագայնացնող մթնոլորտին մէջ իրենց երկրորդական ուսումը ստանալու միջոցին՝ շատ բան կրնան կորսցնել իրենց ազգային ոգիէն, զոր ձեռք բերած են որոշափով մեր ազգ. վարժարաններու յարկին տակ: Եւ որովհետեւ մենք կը հաւատանք թէ լաւ հաղափացի ըլլալու համար, անհրաժեշտ է որ ամէն մարդ պահէ եւ պահպանէ իր ցեղային աւանդութիւնները. մեր ուսողութիւնը կեդրոնացուցած ենք մեր նոր սերունդին դաստիարակութեան կարելու խնդրոյն վրայ, եւ այս նկատմամբ ալ՝ հիմնեցինք ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԻՆ Հ. Բ. Ը. որ բանի մը տարիներու ընթացքին հետզհետէ կազմակերպուելով եւ զարգանալով՝ այսօր արդէն հասած է որոշ բարձրութեան մը, որուն ծաւալումին եւ ուժեղացման համար մեր սիրելի Միութիւնը որոշած է ճիւղական

թէ բարոյական զոհողութեանց առջեւ կանգ չառնել:

Եթէ մեր երիտասարդութիւնը, առանց այլեւայլի, կը լսէ մեր հրաւերը եւ կը փութայ խմբուիլ մեր եղբայրական դրօշին տակ, պատճառներէն մէկն ալ այն է որ, մեր Միութիւնը, հաւասարիմ իր ՈՒՆՏԻՆ, իր հիմնական կանոնագրին, մեր իրականութեան մէջ կը մնայ անկախ, եւ կը մերժէ կուսակցական կամ դաւանական խնդիրներով եւ վեճերով զբաղեցնել եւ մոլորեցնել մեր անմեղ երիտասարդները, որոնք օտարական իրենց դաստիասութիւնները ունկնդրելով, ուրախուարթ կը մեկնին մեր կեդրոնէն, — շինարար, հրահանգիչ, գորգացուցիչ բանախօսութիւններ վայելած ըլլալու անհուն զոհունակութեամբ:

Այս բանախօսութեանց կը հրաւիրուի ամէն ոք, եւ շատեր, բացի մեր երկսեռ անդամներէն, ներկայ կ'ըլլան: Անոնք բոլորն ալ կը վկայեն թէ, մեր դաստիասութիւնները կամ բանախօսութիւնները կը պահեն իրենց լրջութիւնը եւ որեւէ առօրի պատահած չէ՝ որ մեր նոր սերունդին հոգիները պղտորող եղբայրատեաց խօսքեր քսուին, կամ հաղափական եւ կամ դաւանաբանական վեճեր արժարձող հարցեր յուզուին: Այս է պատճառը մեր երիտասարդութեան թիւին անուժին, կազմակերպութեան ուժեղացման Էւ ծաւալուն խանդավառութեան:

Մեր երիտասարդութեան ազգային-մշակութային եւ ընդհանուր զարգացման նպաստ-

Կ Ո Չ

ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԽԻՆ ԱՌԻԹՈՎ

Ապրիլ 15 ին, Հ. Բ. Ը. Միութիւնը կը լրացնէ իր գոյութեան 56 ըդ տարեշրջանը:

Ազգային կազմակերպութեան մը այս երկարատեւ կեանքը, որ մշտական թարմութեան, ուսնացումի եւ հզօրացման ճամբով աննահանջ վերելք մը եղած է մինչեւ այսօր, հոգեպարար գոհունակութեան եւ արդար հպարտութեան աղբիւր մըն է ամէն ճշմարիտ հայու համար:

Կարելի չէ հրապարակային կոչի մը նեղ սահմաններուն մէջ նոյնիսկ շատ հարեւանցի կերպով պարզել այն վճռական դերը զոր Հ.Բ.Ը. Միութիւնը կը կատարէ՝ գաղթաշարհի մեր կեանքին կրթական, մշակութային եւ նիւթական կարիքներուն

ընդառաջ երթալով լայն միջոցներով, իրենց սեւեռակէտ ունենալով պահպանումը հայութեան ոգիին հարազատութեան սւղբմութեան՝ մանաւանդ նորահաս սերունդին մէջ, ամէնուրեք:

Վերջին 48 ըդ Ընդհանուր Ժողովին, հոն ներկայ եղող բազմութիւնը հրճուանքով եւ սքանչացումով տեղեկացաւ թէ, ինչպէս նախորդ տարիներուն, Հ.Բ.Ը. Միութիւնը 1960 ին եւս իր ազգապահպանման նուիրական գործին յատկացուցած է կէս միլիոն տոլարէ աւելի գումար մը: Ժողովականները իմացան այս պատկառելի նպաստին բոլոր մանրամասնութիւնները, որոնք իմաստուն ծրագրով մը կը ծառայեն միեւնոյն վեհ նպատակին:

Այս գործունէութեան ամբողջական պտուկերը տեսնելու համար կազմակերպութեան բոլոր շրջանակները՝ մեր Ընդհ. Տեղեկագրին մէջ յարկաւորուեցաւ, եւ ժողովրդային լայն խաւեր անոր

ող դասախօսութիւնները կը բաժնուին երկու կարգի.—

- ա) Ամառնային,
- բ) Ձմեռնային:

Ամառնային դասախօսութիւնները կը սկսին մեծ արձակուրդին եւ կը կազմակերպուին Երեսասարգացի Վարչութեան կողմէ: Այս դասախօսութեանց կը հետեւին բնկերային հաւաքոյրներ, սալոնի խաղեր երաժշտութիւն եւ այլն: Գասախօսներ իրենք, ուսանողներն են, որոնք առ առաւելն կես ժամ ունին իրենց պատասխանները կարգալու կամ անոր մասին խօսելու համար: Կրկազմակերպուին նաեւ արեւներ, գիշերային զբօսապայտներ, որոնք կը գլխաւորուին Վարչութեան ներկայացուցիչներուն կողմէ:

Ձմեռնային դասախօսութիւնները կը բարձր գաղափարական վերամուտին հետ եւ կը տեսնեն միջեւ Մայիս, տարեկան ֆենութեանց բուականք: Այս դասախօսութիւնները կը կազմակերպուին Վարչութեան կողմէ եւ կը մտնեն մեր նոր սերունդին ազգային փառաբանական գիտակցութիւնը մտակելու եւ սատարելու անոր բնագիտութեան զարգացման մակարդակին բարձրացման: Բացի այս դասախօսութիւններէն, Ամառնային, Վարդանանցի, Զատիկի եւ Թարգմանչաց Տօներուն առիթով

կը կազմակերպուին բնկերական հաւաքոյրներ, գեղարուեստական յայտագրով եւ մեծաբանի համեստ սպասարկութեամբ: (Ներսի Էջերուն՝ Տես այս օրջանի գործունէութեան համառօտ արձանագրութիւնը:)

Բայց մեր երկսեռ երիտասարդները կը սիրեն նաեւ պատուի իրենց օրջանաւորս բնկեր բնկերուհիները. ամէն տարի անոնք կը հաւաքուին պաղպաղակասեղանի մը շուրջ, կ'երգեն, կը խօսին, կ'արեսասանեն, կը պատմեն ու կը նուագեն՝ ի պատիւ իրենց օրջանաւորս բնկերներուն: Արդարեւ, յուզիչ է մեր սիրելի անդամներուն այս խանդավառ եւ բնկերասեղանի: Անաւասիկ թէ ինչպէս կեանքը կը սանի ԲԱՐԵՊՈՐՄԱԿԱՆԻ մեծ ԸՆՏԱՆԻՔԷՆ, ներս. եւ թէ ինչպէս մեր անդամները սիրով, անկեղծ բարեկամութեամբ եւ անսահման գիւրջով կը գործակցին՝ մեզի տալով այն ապահովութիւնը, թէ ՎԱՂԸ, երբ այս մեծ բնասնիքին եւ ազգին դեկավարութեանը կոչուին, պիտի գիտնան ցուցաբերել փառաբանական այն ազգիւրդին, որուն ականատես կ'ըլլանք այսօր: Վստահ ենք որ անոնք նոյն ոգիով ալ պիտի գործեն՝ ի շահ մեր գաղութին եւ ամբողջ երկրի հայրենասեղ փառաբաններու փառոյական եւ մտակութային վերելքին:

հաղորդ մեացին՝ նոյն Ընդհանուր Ժողովին մէջ մեր արտասանած Բացման Ճառով, զոր Հ.Բ.Ը. Միութեան բարերար ձեռնարկներուն ջատագով կանգնող բազմաթիւ լրատագիրներ փութացին հրատարակել, Ամերիկայի մէջ թէ արտասահման:

Շինարար ծաւալութեան բաժինը զոր Բարեգործականը կը բերէ հայ կեանքին՝ շատ մեծ է և տարուէ տարի աւելի տարածուն հանգամանք մը կը ստանայ. որովհետեւ՝ մասնաւորաբար իր կրթական և մշակութային գործերը անդիմադրելի մղուածով մը աւելի կ'ընդարձակուին ու կը կատարելագործուին միշտ:

Յառաջդիմութեան և վերելքի այս թափը կարելի չէ կասեցնել: Բայց Միութեան ի ձեռին ունեցած միջոցներով հնարաւորութիւն չունինք ստիպողական նոր պէտքերու գնացում տալու:

Այս կացութեան իրազեկ ըլլալէ ետք, վերջին Ընդհանուր Ժողովը անհրաժեշտ նկատեց տարեկան ընդհանուր հանգանակութիւններով թեթեւացնել կեդր. վարչութեան ծանր բեռը, և այս տարուան համար որոշել գոյացնել 150,000 տոլարի գումար մը, 100,000 տոլար Ամերիկայի և 50,000ը արտասահմանի մէջ:

Թէ Ամերիկայի և թէ արտասահմանի Միութեան շրջանակներու համար մասնաբաժիններ նշանակուած են, և իւրաքանչիւր վայրի մէջ հաւաքուած գումարը գլխաւորաբար պիտի գործածուի տեղւոյն կրթական, մշակութային և խնամատարական կարիքներուն, կեդր. վարչութեան կողմէ եղած յատկացումներուն պակասը լրացնելով:

Անձկագին կը պայտսենք որ այս ձեռնարկը յաջողութեամբ պսակուի, և անգամ մը եւս փայլուն ապացոյց մը ըլլայ թէ Բարեգործականի բազմակարգ հաւատարմութիւնը և անհամար բարեկամները զայն կը սիրեն ո՛չ թէ միայն գաղափարական հաւատարմութեամբ, այլև գործնականապէս, սիրայօժար զոհողութեան զգացումով:

Ապրիլ ամիսէն սկսեալ, ինչպէս կը կատարուի երկար տարիներէ ի վեր, Հ.Բ.Ը. Միութեան կազմակերպութիւնները պիտի տեսնուին անոր հիմնարկութեան 56րդ

տարեդարձը: Պիտի օրհնուի յիշատակը Միութեան մեծանուն Հիմնադիր Պողոս Նուպար փայտի և իր առաջին գործակիցներուն, որ այս նախախնամական ընկերակցութիւնը պարգեւեցին ազգին: Պիտի ոգեկոչուի երախտաշատ հարիւրէ աւելի բարերարներու անմոռանալի զոհարբումը, պատկառելի գումարներով թէ համեստ աջակցութիւններով, որ Միութեան ամրացումին ու զօրացման մեծագոյն ազդակը եղած է: Պիտի պարզուի նաեւ այսօրուան տեսարանը այն հոյակապ իրագործումներուն զոր կը կատարէ մեր ընկերակցութիւնը:

Այս բոլորը պիտի ոգեւորեն ու հրճուեցնեն ազգասէր բազմութիւնները: Ընդատեն է խորհելու սակայն, թէ երբ կը կը պանծացնենք յիշատակը անմահանուն վաստակաւորներու և բարերարներու, մենք ի՞նչ կ'ընենք իւրաքանչիւրս: Կը բերե՞նք զոհողութեան մեր բաժինը, մեր կարողութեան չափով, և կրնա՞նք պայծառ խղճմտանքով մենք մեզ աւանդապահը նկատել նուիրական ժառանգութեան մը:

Մեր կազմակերպութեան վարիչ մարմինները իրենց համար անխուսափելի պարտականութիւն մը պէտք է նկատեն այս գաղափարը տարածել և շնչել ամէն ձեւերով, և լրջօրէն աշխատիլ զայն թանձրացեալ իրականութեան մը վերածելու:

Միութեան Ամերիկայի աշխոյժ շրջանակը, Ընդհ. Ժողովի որուչումէն շատ ժամանակ չանցած, կազմակերպական ամէն աշխատանք լրացուց և հանգանակութեան գործին ձեռնարկեց մեծ եռանդով: Բարեգործականի Ապրիլ 15ի տարեդարձի տօնակատարութեանց ատեն, կեդր. Յանձնաժողովը անգամ մը եւս պիտի շնչուէ այս արշաւին կենսական կարեւորութիւնը:

Հանգանակութեան ծրագիրը արտասահմանի մէջ պաշտօնապէս պիտի յայտարարուի տարեդարձի համախմբումներուն ատեն և անոր համար հարկ եղած լուրջ ջոյները պիտի առնուին այդ թուականէն սկսեալ, որպէս զի վերջնական որդիւնքը կարելի ըլլայ ի ձեռին ունենալ Միութեան Մշակոյթի Կիրակիին օրը, Հոկտեմբերի մէջ: Իր գոյութեան ընթացքին, Հ.Բ.Ը. Միութեան բոլոր կոչերը զօրաւոր կեր-

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՒԵԱԼՆԵՐ

Հ. Բ. Ը. Մ. Ի ՄԱՍԻՆ

Թիւերու լեզուց՝ ամեցեց
օուս համոզող լեզուց է:
Հ. ՓՈՒԱՆՔԱՐԷ

Ըստ 1960 տարեշրջանի հաշուեկշիռին, Հ. Բ. Ը. Մ. ը ազգապահպանման նպատակներու յատկացուցած է 593,208.81 տոլար, որուն 339,429.64 տոլարի գումարը ծախսուած է միայն դպրոցական ձեռնարկներու: Երկու երկրորդական վարժարաններու համար միայն իրենց յատուկ հիմնադրամներ կան և ծախքերը կը հոգացուին անոնց եկամուտներէն: ասոնք են՝ Մելգոնեան Հաստատութիւնը և Դարուհի Յակոբեան Աղջկանց Երկրորդական Վարժարանը: Դպրոցներու ամբողջ ծախքին մէջ ասոնց բաժինն է 132,264.81 տոլար: Մնացեալ 207,164.83 տոլարի խոշոր գումարը հայթայթուած է, ուրեմն, Միութեանը ընդհանուր մուտքերէն: Եւ որովհետեւ այդ մուտքերը անբաւարար են, հարկ է նախատեսել թէ, ինչպէս նախորդ տարիներուն, 1960ին եւս 48,607.56 տոլարի բաց մը կայ: Նախորդ տարիներուն նման, այս շրջանին բացն ալ ներքին կարգադրութիւններով հաւասարակշռուած է:

Նոր սերունդին պատրաստութեան երկրորդ շրջանը, անոր կրթութեան պըտակամը համալսարանական կամ մասնագիտական ուսմամբ: Միութիւնը սրբաւէ, դժուարութեան առջեւ չի դնել: Այս վերջին տարիներուն, վեհանձն բարեբարներու կողմէ հաստատուեցան կրթաթոշակի քանի մը մեծագումար և քանի մը հաս ալ համեատ հիմնադրամներ, որոնց հա-

պով խօսած են մեր ժողովուրդին սրտին: Որովհետեւ անոնց մէջ պաշտօնի վրայ գտնուող անձերու ձայնը չէ որ կը լսուի, այլ ազգին անմահ հոգիին հրուէր:

Վստահ եմ թէ այդ հրուէրին բոլորս ալ ընդառաջ պիտի երթանք պարտաճանաչութեան խոր գիտակցութեամբ:

Քէպի գործ ուրեմն, յաջողութեան վրձնական կամքով: Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Նախուսակ

սոյթները գոհացում կուտան այս պահանջին:

1961ին, չորրորդ տարին ըլլալով, Կեդր. Վարչութիւնը համալսարանական թոշակներ բաժնեց հարիւրի մօտ ուսանողներու, զանազան երկիրներէ ընտրուած, առանց հաշուելու այն գումարները, որ միեւնոյն նպատակով կը տրամադրուէին մեր Միութեան Եւրօպայի, Մերձաւոր Արեւելքի և Ամերիկայի Կեդր. Յանձնաժողովներուն կողմէ, ըստ կտակային տրամադրութեանց:

Հ.Բ.Ը. Միութեան Թեհրանի Մասնաճիւղը կը պահէ 500 աշակերտ ունեցող դպրոց մը, կը ծախսէ 22,000 տոլար, որուն 3/4ը կը հայթայթէ իր միջոցներով: Մանչեսթրի Մասնաճիւղը ունի 170 անդամ (ամբողջ հայութեան թիւը հոգ՝ 200 է) և տարեկան 2000 տոլար կը գոյացնէ անդամատուրքերէ և նուէրներէ:

1961ի աշնան քուէարկուած է պիւտճէ 1961-62 տարեշրջանին համար և անոնց միացեալ գումարն է 266,000 տոլար: Այս գումարի կէսէն աւելին Կեդր. Վարչութիւնը կը հայթայթէ: Տեղւոյն վրայ գոյացած հասոյթներուն մեծագոյն մասը գլխաւորաբար միութեան 12 սեփական վարժարաններէն հինգին միայն բարեկեցիկ աշակերտներէն զանձուած թոշակներն են, որոնք այդ նոյն վարժարաններուն ընդհանուր ծախքին կէսը անգամ չեն գոցեր:

Գալով զուտ տեղական գործունէութեան արդիւնք եղող հասոյթներու, երկու շրջանականներուն մէջ ալ անոնց գումարները շատ համեստ են և վարչական ծախքերուն կարեւոր մէկ մասը Կեդր. Վարչութեան կողմէ կը հայթայթուի, բացի տարուայն ընթացքին երեւան եկած անակնկալ ծախքերէ:

Բարեգործականը այսօր ունի 12 վարժարաններ, զանազան երկիրներու մէջ: Երկրորդական կրթութեան յատուկ հաստատութիւն մը՝ Մելգոնեանը՝ Կիպրոս, երկու երկրորդական կրթարաններ և երկու նախակրթարան՝ Լիբանան, և երկրորդական վարժարան մը և չորս նախակրթարան՝ Սուրիոյ մէջ, դպրոց մը Թեհրան և դպրոց մըն ալ Աթէնք:

Իր երկրորդական վարժարաններէն շրջանաւարտներ ու թիւը կը հասնի 962ի:

Դիչ առաջ անդրադարձայ արդէն թէ ուսման լման ընթացք մը բոլորող պատանիները վաղուան համար մեր լաւագոյն յոյսերն են և պէտք չեմ տեսներ այս մտածումին վրայ աւելի ծանրանալու:

Միութեան սեփական վարժարաններուն մեծածախս մատակարարութեան հետ, օգնած ենք նաեւ 75 ազգային, յարանուանական կամ մասնաւոր դպրոցներու, եօթը երկիրներու մէջ:

Միմիայն Միութեան դպրոցներու մէջ կ'ուսանին 2,900 աղաք. և կը պաշտօնավարեն 226 ուսուցիչ:

Այդ դպրոցներուն ծախքը 1960ին եղած է 283,769.39 տոլար, իսկ նպաստը կալ դպրոցներուն յատկացուցած ենք 55.660.25 տոլար: Ուրեմն, Միութեան լոկ դպրոցական գործին մատակարարութիւնը 339,429.64 տոլար արժած է:

Եթէ ասոր վրայ աւելցնենք համալսարանական կամ մասնագիտական ուսմանց համար մեր բաժնած 41,930.12 տոլարի գումարը, զուտ կրթական նպատակներու համար ծախսած կ'ըլլանք 384,359.76 տոլար: Հասկնալի է թէ այս հսկայ գոհողութիւնը կը կատարուէր ազգին ապագային մտահոգութեամբ:

Սնամատարական նպատակներու համար 1960ին ծախսուած է շուրջ 66,680.90 տոլար, և երբ վերեւ յիշուած բոլոր գումարներուն վրայ բարդենք նաեւ ըստ կտակային արամադրութեանց կատարուած յատկացումները ազգապահպանման ընդհանուր նպատակներու մեր արամադրած գումարը, 1960ին, կը յանգի 593,208.81 տոլարի:

1960 տարեշրջանի վերջաւորութեան, միութեան ընդհանուր գոյքը եղած է՝ 10,589,543 տոլար, մուտք եղած է 733,966 տոլար եւ ամբողջ ելքը՝ եղած է 782,574 տոլար, որմէ 593,208 տոլարը յատկացուած է ազգապահպանման գործին և մնացեալը՝ վարչական ընդհանուր ծախքերու և հիմնադրամներու պահեստին:

Միութեան գոյքին վերջին հինգ տարեկիրու պատկերն է. - 1956ին՝ 8,300,000 տոլար, 1957ին՝ 9,000,000 տոլար, 1958ին՝ 9,563,000, 1959ին՝ 10,090,000 և 1960ին՝ 10,589,543 տոլար:

Այս թուանշանները մեծ ուրախութիւն

ԱՐԱՐԱՏԻՆ

Ո՛վ էեզ կերեց այսպէս հզօր ու հասաբեւս. Դարեբու դաւն ալ փրօցեցիր դուն անվկանդ, Կասարդ նոյնիսկ ըլլար եթէ զերթ ադամանդ, Պիթի փխրեէ մոնչացող մերիկէն հետս:

Կրանիթ չես ո՛վ Արարաւ. եւ դուն զիեսս Որ կամբ մեր օազախն եղաւ Բու հիմբուդ. Ամպերը գործ եթէ շանթին ելերանգոյթ Կայմդ դուն նորէն պիթի երկինք կարկառես:

Անպիտեց ի վեր կու՛մ մ'ես կարծես հնասուածեան Ու յսակիդ մարգերը ծախ սեգ ու հզօր՝ Գորգն են կանաչ Բու զղեակիդ անջական:

Հովիւ ըլլամ այս ափերուն վրայ ծանօթ, Հօտեսս հոն թող հարակեն մինչեւ իրկու՛ն. Ու սրինգս թող փողերգէ փանձեզ անցկուն:

ՅԱԿՈՅ ԽԱՂԱՏՈՒՐՈՒՆ

Փահիրէ
1960

ՍՏԱՅԱՆՔ.

«ՄԵՆՔ ՄԵՐ ԱԿՆՈՅՈՎ»

ԱՂ. ՍԱՐՈՒԻՍԼԻ

Մեր ամբողջ կեանքը՝
220 երգիծանկարներով:

Էջ 262, Գին 250 Ե.Ճ. Դիմել հեղինակին՝

- 4, Սերափիս փողոց՝ Հելիոպոլիս կամ՝ Հայ Ազգային Հիմնադրամի գրասենեակը՝ 3, Տուպրէ փողոց, Փահիրէ
- Աղեքսանդրիա՝ Պր. Տիգրան Սուկեանի,
- 9, Սթամպուլ փողոց:

Կը պատճառեն ազգասէր եղող բոլոր հայերուն:

Բաղեց՝ Բ.Գ.

Հ. Բ. Ը. Մ. Ընդհ. Ժողով

ԶՕՐԱՑՈՒՄ ԵՒ ՎԵՐԵԼՔ

(Անդրադարձ ճախագահ Ալեք Մանուկեանի ճառին)

Արդէն իսկ քանի մը ամիսներ սահեցան անցան Հ. Բ. Ը. Միութեան 48րդ Ընդհ. Ժողովէն, որ գումարուեցաւ Նիւ Եօրքի մէջ. «Տեղեկատու» Յունվ. թիւով արբուած էր անոր ամփոփ տեղեկատուութիւնը:

Այս տեղեկատուութեան մէջ խօսուած էր Միութեան Նախագահ Ալեք Մանուկեանի արտասանած ճառին մասին, բայց տեղի չգոյուածն պատճառով չէր արուած ճառին բնագիրը կամ ամփոփումը, որ լոյս տեսած է «Յուշարար»-ի, ապա Հ. Բ. Ը. Միութեան բոլոր թերթերուն և ազգային այլ թերթերու մէջ:

Յատկանշական է այս ճառը, իր ոգիով և իր բովանդակութեամբ: Կ'արժէ անդրադառնալ անոր մէկ քանի հատուածներուն:

Աշխարհի ամէն կողմէն Նիւ Եօրք հասած պատգամաւորներուն ուղղելով իր խօսքը, Նախագահ ըսած է՝ թէ 1960-61ին Միութեան գործունէութեան ծիրը անհամեմատ ընդարձակում ունեցած է, թերեւս ակամայ Գործիչներու և միջոցներու յանկարծական անբաւարարութիւն ստեղծելով: Այս պատճառով ալ՝ այս Ընդհ. Ժողովը կարեւոր էր, այդ «բարգաւաճումին, զօրացման և վերելքին սատարելու համար» խորհրդակցելու և շինիչ թելադրութիւններու գործնական որոշումներ առնելու տեսակէտէն:

Կեդրոնական Վարչութիւնը, տարիներէ ի վեր, գծուած և 47րդ Ընդհ. Ժողովէն ալ վաւերացուած իր ուղեգրին ունի անշուշտ: Բայց անիկա չէ բաւականացած «արդէն իսկ կազմակերպուած ձեռնարկներուն յանձնաձեւով», այլ ուշադրութեան աւարկայ գարձուցած է «այս աշխարհի ներկայ վիճակին առնչութիւնները մեր ընկերակցութեան այսօրուան կեանքին և անոր ապագային հետ: Արթնամիտ և հեռատես կեցուածք արդարեւ, որ ներդաշնակուած է՝ իրենց վեհապետական իրաւունքները անվթար պահելու նախաձեռնելու (հին կամ նոր ազատ) երկիրներու հետ, մանաւանդ Մերձաւոր

Արեւելքի մէջ, ուր կը գտնուի գաղութահայութեան մեծագոյն զանգուածը, և որ ամենէն ընդարձակ դաշտն է Բարեգործականի գործունէութեան: Միութեան այս տեղի մասնակցութեան թիւը կը հասնի 60ի մօտ 8000 անդամներով: Իսկ անչարժ կառուածներուն արժէքն է աւելի քան մէկ միլիոն տոլար (պաշտօնական տակով՝ 550 հազար ռոպլ):

Յայտնի է, որ յիսունը վեց տարեկան մեր Միութիւնը, օժտուած էր քաղաքաւարական և կազմակերպական զօրաւոր պայմաններով. անդամակցութեան հաւաքական կամքը կը ներկայացուէր մեկ բարձրագոյն վարչութեամբ: Վերջիցեալ պետական նոր դրութիւններով, Միութեան այս աւանդական աւանդապահութիւնը կրնար պահ մը դժուարութեանց քախիլ: Սակայն, շնորհիվ կեդր. Վարչութեան աշարջութեան և արագօրէն առաքուած լիազօրներու ըլլալով, բոլորայի, ըլլալ Միջին Արեւելքի մասնակցութեան հետ՝ կարելի եղած է պահպանել բաղձացուած վիճակը: Մեկ եւ անբաժանելի պահուած է Միութեան վերի ղեկավարութիւնը, որուն այս հանգամանքը սկիզբէն ի վեր նախանձը շարժած է կարգ մը անբարեացակամ տարբերու: Աստիճ. տեղ տեղ փորձած են (ինչպէս Յունաստանի մէջ) տեղական իշխանութեանց մէջոցաւ խախտել այս միութիւնն ու անբաժանելիութիւնը: Նախագահը լուռ անցած է այս վերջին մանրամասնութեան վրայէն: Յայտնած է միայն, որ կեդր. Վարչութեան անդամներուն թիւը 15էն 19ի բարձրացնելով և հանունագրին մէջ փոքր փոփոխութիւններ մտցնելով կարելի եղած է կեդր. Վարչութեան հետ շրջաններու կապերը աւելի ամրապնդել և համագործակցութեան ոգին աւելի տարածել և խորացնել: Միութեան բոլոր շարքերուն մէջ, Բնական է, այս բոլորը, հաւանութեամբը Ընդհ. Ժողովին:

Այս կարգադրութեամբ յայտնի կ'ըլլայ որ Հ. Բ. Ը. Մ. ի աշխարհին մէջ ստեղծուած է նոյն պատկերը, ինչ որ գոյութիւն ունի 46 տարիէ ի վեր Հայաստանեայց Եկեղեցիին մէջ: Հայաստանեայց Եկեղեցիի տարբեր երկիրներու ազգային-կրօնական իշխանութիւնները վարչակապետներն ինքնավար և իրենց երկրի օրէնքներուն ենթակայ ըլլալով մէկ-

տեղ, և հոգեւորս կը մնան Ս. Էջմիածնի բարոյական հովանաւորութեան և տնօրինութեան տակ: Այդպէս ալ, Հ. Բ. Ը. Միութեան տարբեր երկիրներու տեղական վարչութիւնները իրենց իրենց մէջ անկախ, ինքնավար և երկրի իշխանութեանց ենթակայ ըլլալով մէկտեղ, բարոյապէս եւ աւանդութիւններով կապուած կը մնան Կեդրոնին:

«Աշխարհի ներկայ վիճակին մէջ, կ'ըսէ մեր նախագահը, անսպասելի պատահարներն ու յեղաշրջումները անպակաս են. Կեդր. Վարչութիւնը կը գործէ պարագաներուն պահանջած խոհեմութեամբ ու չրջահայեցողութեամբ՝ ազգային նուիրական աւանդ մը, մեր իտքըթիւ համրանքին համար յոյսի ու հպարտութեան կենդանի ազբիւր մը եղող այս սիրելի Միութիւնը պահպանելու համար անվտանգ և անսասն»:

Հակառակ այս տեսակ մը ապակեդրոնացման դրութեան ստեղծումին, Հ. Բ. Ը. Միութեան գործունէութիւնը, աւելի ճիշտը անոր առջև դրուած գործերն ու կարիքները անհամեմատ ծաւալ ստանալու վրայ են և ստացած են, և ստեղծուած է միջոցներու (գործողներու և նիւթականի) անբաւարարութիւն: Ետ գործ և շատ կարիք կայ, և «Կեդր. Վարչութիւնը տազնապալի կացութեան մը առջև» կը գտնուի:

«Տազնապալի կացութիւն» բացատրութիւնը, հաւանաբար, գործածուած է ժողովականներուն ուշադրութիւնը սրելու համար: Բոլոր հայերուն կարծիքն ու համոզումն այն է որ, ոչինչ կրնայ «տազնապալի» դարձնել Միութեան և իր Վարչութեան կացութիւնը, քանի անիկա (Միութիւնը) կը վայելէ մեր ժողովուրդին ու բոլոր երկիրներու կառավարութիւններուն անվերապահ վստահութիւնը:

Այս «տազնապալի» կարծուած կացութիւնը ստեղծուելի սկսած է այն օրէն, երբ Միութիւնը, կարօտեալ, թշուառ, որբացած, հիւանդ հայերու օժանդակելու իր առաքելութիւնը մեծ մասամբ լրացուցած դաւանելով, բայց այդ մարդասիրական գործը շարունակելով հանդերձ. իր գործունէութեան առանցքը դարձուց կրթական գործը: Վաղուան մեր ազգը՝ այսօրուան մեր սերունդէն պիտի կազմուէր: Հետեւաբար, անհրաժեշտ

էր մեր ժողովուրդին մտաւոր և թեքնիք մակարդակը բարձրացնել:

«Մեր դպրոցներուն ցանցը - կ'ըսէ նախագահը վերջին պատերազմին աւարտէն յետոյ, տարուէ տարի աւելի տարածուեցաւ»: Իրարու ետեւէ կրթական նոր յարկեր ստեղծուեցան, Միութիւնը այժմ ունի 8 նախակրթարաններ և 4 երկրորդական վարժարաններ. ստանցմէ զատ՝ կ'օժանդակէ 70է աւելի ուրիշ հայ դպրոցներու:

Կեդր. Վարչութիւնը՝ ոչ միայն չի կըրնար և չ'ողգեր նուազեցնել այս դպրոցներուն թիւը կամ սահմանափակել իր օժանդակութիւնը, այլ—համոզկեր պահանջներու հիման վրայ - կ'ուզէ աւելցնել: Հետեւաբար, հասոյթի բացառիկ ազբիւրներ պէտք է ճարուելին, կարենալ դիմագրաւելու համար ասիկա:

1950ին, նախորդ տարիներուն նման, կրթական ձեռնարկներէն բաց մը գոյացած է (48,607.56 տոլար), և կարգադրուած է ներքին հաւասարակշռումով «Բայց — դիտել կուտայ նախագահը — մեծ կազմակերպութեան մը Վարչութիւնը չի կրնար իր գործը այս ձեւով շարունակել: Միութեան անունն ու վարկը թոյլ չեն տար որ մեր դպրոցներուն մէկ մասը փակենք: Մեզի կը մնայ ուրեմն խորհիլ հասոյթի նոր ազբիւրներու մասին» (Այս մասին՝ տեսնել նաեւ նախագահի յատուկ կոչը, Միութեան 56րդ ասուրեղարձին՝ Ապրիլ 15ի առթիւ):

* *

Հայ մամուլին մէջ ոմանք դիտողութիւն ըրած էին. թէ Հ.Բ.Ը.Մ.ի կրթական կան հիմնադրամներէ օգտուող ուսանողներ, երբ կ'աւարտեն իրենց ուսումը և կրնետուին գործի ապարէզ, այլեւս չեն հետաքրքրուիր Միութեան գործերով ու չեն իսկ օժանդակեր անոր:

Նախագահը այս երեւոյթը այպանելի գտնելէ ետք, կը յայտնէ որ Կեդր. Վարչութիւնը երբեք գրաւոր յանձնարարութիւններու կողմնակից չէ: «Հարցը — կ'ըսէ ան — իր էութեամբ զուտ բարոյական նկարագիր ունի. հոգեկան ջերմութիւնը, այսինքն ազգային մեծ հաւաքականութեան մը մէկ անդամը ըլլալու զօ-

ՏՕՔԹ. ՎԱՐԴԳԷՍ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ԿՈՒՏԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ԽՐ ՏՊԱԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սօսրեւ կուտանք հաղորդագրութիւնը տեսակցութեան մը որ արուեստը Հ.Բ.Ը.Մ. եան Ռուսիո ժամէն (Ի.իւ Եօրք), 9 Յունուար 1961 իւ:

Սօսրը Տօքթ. Վ. Մկրտչեանն է, ահանաւոր գիտնական, հեղինակութիւն մը և Հ.Բ.Ը. Միութեան բարերար մը, որ վերջերս Հայաստան այցելեց, անցնելով Եգիպտոսէն:

Հարցում.— Տօքթոր, ի՞նչ է Ձեր կարծիքը ընդհանուր առմամբ Հայաստանի և մասնաւորաբար Երեւանի մասին:

Պատասխան.— Կ'ենթադրեմ թէ ծագումով, սեւէ հայ չափազանց հպարտ պիտի ըլլայ ինչպէս ես եղայ՝ սկանաւես ըլլա-

րաւոր զգացումն է որ թոչակընկալ սաներու խզճին պիտի խօսի Այս տեսակէտով մեզի լաւագոյն յոյսերը կուտան ազգային առողջ դաստիարակութեամբ պատրաստուած պատանիները. անոնք են մանաւանդ որ պիտի գիտնան իրենց ստացած բարիքը գնահատել և փոխարինելու:



Հայութեան մէջ, ներկայիս, բարեբախտաբար, շատ է թիւը ողջամիտ դեկավարներուն: Իսկ Բարեգործականի շրջանակներու մէջ՝ խոհեմ և լրջախոհ անձնաւորութեանց շատ կը հանդիպինք:

Այս իրողութեան վրայ հիմնուելով, նախագահ Ալիք Մանուկեան հաւատք ունի, որ Բարեգործականի շրջանակներուն վրայ պարտք կ'իյնայ արգիւնաւորել Ն.Ս. Օծութեան Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին կարկառած եզրայրական ձեռքը արգիւնաւոր դարձնել, և գեախն պատրաստել՝ Անթիլիասի հետ գոյացած անհասկացողութեան վերացումին համար: Մեր նախագահին այս վեհանձն ժեսթը ծափահարելի է իսկապէս:

Հ. Ժ.

ըով Հայաստանի վերելքին. Երեսներ կէս միլիոննոց քաղաք մը չէ միայն, այլ, պիտի ըսէի որ անոր պատկերին վրայ գրուած է հայկական անցեալ քառասուն տարիներու պատմութիւնը. իսկապէս փառահնգ պատմութիւն մը: Բաղաքը ինծի կ'երեւէր իբրեւ վերածնած հայազին խորհրդանիշը: Այն որ ամենէն աւելի աջի կը զարնէ Երեւանի մէջ՝ գեղեցիկ չէ՞, քերու ճարտարագետութիւնն է. անոնց հոյակապ մեծութիւնն ու վիթխարի թիւը և ցոցող բուած արուեստին կատարելութիւնը:

Հարցում.— Մենք յաճախ իմացած ենք որ Հայաստանի մէջ արուեստները, զբոսկանութիւնը և երաժշտութիւնը հասած են մեծ բարձունքներու: Ի՞նչ տպաւորութիւն ունեցաք անոնցմէ:

Պատասխան.— Ներկայ հայկական մը շակոյթին հարցը հարկաւ ընդարձակ է և կարելի չէ արդարութիւն ընել անոր կարճ խօսակցութեան մը մէջ: Մարդ միայն կըրնայ ակնարկներ նետել այս մշակոյթին մասնիկներուն վրայ և ատու կըրնայ գաղափար մը կազմել անոր հասած մակարդակին մասին: Ես նեկայ գանուեցայ հայկական խմբապարի մը կատարման, որ ամենէն հաճոյալին էր: Հրապուրուած էի նուագէն, պարի գեղեցկութենէն և կատարելութենէն: Ուրիշ աշխարհ մը փոխադրուած էի: Համոզուած եմ որ այս խմբապարը կըրնայ համեմատութեան դրուիլ որեւէ ուրիշ տեղի լաւագոյն ներկայացումի մը հետ: Ապա այցելեցի Գեղարուեստի Թանգարանին նկարասրահը: Անակնկալ մը եղաւ ինծի համար, տեսնելով մեծ թիւով դիմանկարներու զլուխ գործոցները: Հաւաքածոյ մը, որ կըրնայ պատիւ բերել սեւէ ազգի մը: Կեցայ այդ գործերէն առինքնուած: Կը հարցնէի ես ինծի թէ արդեօք չէ՞ ստեղծուած հայկական նկարչութեան դպրոց մը հոն, ինչպէս օրինակի համար Յլամահան դպրոցը: Ծարտարապետական մարդին մէջ բոլորովին նոր և իւրայատուկ ոճ մը ստեղծուած է, հիմնուած հայկական հին կերպերու և մոթիֆներու վրայ: ծայրագոյն գեղեցկութեան և վեհութեան ոճ մը: Մեր երաժշտութիւնն ալ մեր ժողովուրդին մէջ լաւ ճանչցուած է ու մեկնութեան չկարօտիր: Ինչ որ աջի կը զարնէ, այն է, որ



յաստանի աշխատանքներու մակարդակին մասին: Ի՞նչ են Ձեր նկատողութիւնները այս մասին:

Պատասխան.— Բացատրութիւն մը նախ Գիտական հետազոտութիւններուն մեծ մասը Հայաստանի մէջ կատարուած է Ակադեմիայի առաջնորդութեամբ: Աշխատանքը կը տարուի զանազան մարզերու վրայ՝ հիմնարկներու միջոցաւ, որոնք ինքնավար կազմակերպութիւններ են իրենց անջատ վարչութիւններով և պաշտօնէութեամբ: Տեղեկացայ որ Ակադեմիան ունէր 58 հիմնարկներ: Ակադեմիայի քարտուղարութեան գրասենեակներուն մէջ ծանօթացայ երկու հիմնարկներու՝ Քիմիագիտութեան Օրկանական մանր Հետազոտութեանց և Երկրագործութեան Քիմիական Հետազոտութեանց տնօրէններուն և պաշտօնեաներուն: Պէտք է շեշտեմ, որ ասոնք իմ մասնագիտութեանս դաշտերն էին: Իմ կարծիքով՝ այդ Հիմնարկներուն աշխատանքները, անոնց կազմածները և մեթոտները շատ մօտ կերպով բազմաթիւ են Միացեալ Նահանգներու նոյն հաստատութեանց հետ: Հիմնարկներու տնօրէնները իմ վրաս կարող մարդոց ապաւորութիւն թողուցին և պաշտօնէութիւնը գտայ մեծ խանդավառութեամբ տագորուած: Աւելորդ է ըսել, որ ես շատ լաւ ընդունելութիւն գտայ և շատ անգամներ հրաւիրուեցայ խօսելու պաշտօնէութեանց հետ: Այս հիմնարկութեանց նուաճումները յիշատակարժան են և կը գտնուին յառաջդիմութեան ճամբուն վրայ: Երկու հիմնարկները նոր կեդրոններ պիտի ունենան: Արդէն Երկրագործութեան Քիմիական Հետազոտութեանց կեդրոնը շինուելու վրայ էր: Անիկա պիտի բովանդակէ բաւական թիւով խոշոր շէնքեր և կարելի է Ամերիկեան մակարդակին համաձայն նկատել: Տնօրէնը հաւաստեց որ ատիկա Համալուծեանական կեդրոն մը պիտի ըլլայ: Բաւական պատիւ մըն է ատիկա Հայաստանի համար:

անիկա հասած է ամենէն մեծ բարձունքներուն կարճ ժամանակամիջոցի մը մէջ: Թէեւ ես լաւ չեմ ծանօթացած մեր ճոխ և ապաւորիչ գրականութեան, սակայն իրողութիւնն այն է, որ հայ գրականութեան վարպետներուն մեծ մասին երկերը թարգմանուած են շատ մը լեզուներու և անյաբարէն կը կարդացուին բոլոր ժողովուրդներէն:

Քալով մշակոյթի խնդրին, ես պէտք է ըսեմ որ Հայաստան կը պահէ իր անցեալի մշակոյթը գուրգուրանքով: Կառուցուած է հոյակապ մատենադարան մը, 13,000է աւելի թանկարժէք ձեռագիրները պահելու համար:

Այս Մատենադարանին այցելութենէս բան մը աւելի ոտրվեցայ: Ուրիս էի գիտնալուս՝ որ Արիստոտելի առաջին թարգմանութիւնը հայերէն էր և մեր նախահայերը շատ լաւ տրված էին իրենց ժամանակի բոլոր գիտութիւնները և փիլիսոփայութիւնը:

Հարցում.— Իբրեւ գիտնական մը՝ բնական է դուք աւելի հետաքրքրուեցաք Հա-

Հարցում.— Ի՞նչ կրնաք ըսել մեզի Հայաստանի հնութիւններուն մասին:

Պատասխան.— Ես բազմից ունեցայ այցելելու այն աւերակները, որոնք հին Հայաստանի ամերէն նշանաւոր ապարանքները եղած պէտք է ըլլան: Այդ էր՝ Գառնիի

տաճարը, որ մեկնանք մըն էր, շինուած Բրիտանոսէ մէկ դար առաջ: Ինչիկա շինուած է գոճուարամտաշելի լեռնային մամայի վայր մը, բարձր սեպածեւ ժայռի մը վրայ, որ բարձրէն կը նայի սարսափելի լեռնաշղթաներու և գահայէժ ժայռերու: Իր ջրջակայքը նկարագեղ է և գեղեցիկ: Քարերէն շատերը, որոնք ժամանակին մաս կազմած են շէնքին կառոյցքին, այժմ կը մնան տապալած: Պազալթի կտրուած հսկայ զանգուածներ են անոնք, ճանչցուած իրրեւ ամենէն կարծր ժայռերէն մէկը և շատ դժուար է զայն տաշելը: Բայց, հակառակ ասոր, քարի զանգուածները մեծ մասամբ կտրուած են կատարեալ վարպետութեամբ և քանդակումներ խիստ գեղեցիկ են ու համաչափ Մէկը դիտելով անցեալի այս հոյակապ մնացորդները, կրնայ միայն հիանալ Հայաստանի հին արուեստին նուրբ արհեստին վրայ: Մարդ յարգանք կը զգայ անցեալի այս վարպետութեան հանդէպ՝ երբ այցելէ Գեղարդի Եկեղեցին, որ ամբողջութեամբ կարծր քարերով է շինուած: Ասիկա իսկապէս հրաշալիքներու հրաշալիք մըն է: Հարցում.— Իրրեւ վերջին հարցում մը, կրնայի՞ք ծանօթացնել մեզ Հայաստանի ապրելակերպի պայմաններուն և բնիկներու նիստ ու կացի մասին:

Պատասխան.— Հայաստանի մէջ առատ ուտեստեղէն կայ ժողովուրդին բարօր գոյութեան համար: Երկրին մէջ ապրանքի պակասութիւն չկայ, թէպէտեւ շատ ապրանքներու գիները բաւական սուղ են և հասարակ գործաւորի կարողութենէն վեր: Անցած քսուասուն տարիներու առաջուան վրայ ապրուստի մեծ բարեփոխում կայ և բնակարանի խնդիրը անկասկած գոհացուցիչ ճամբուն մէջ է: Ասիկա ըսել չէ թէ Հայաստանի ապրելակերպը համեմատելի է Միացեալ Նահանգներուն հետ: Հասարակ զանգուածին վիճակը դեռ քիչ մը դժուարին է և ժամանակ մը այդպէս պիտի շարունակուի: Բայց այդ կացութեան վերջը մօտ է և անգամ մը որ Հայաստանի ճարտարարուեստի հիմնական կարեւոր աշխատանքները կարգի դրուին, ապրելու պայմաններն ալ — որ կ'սխում ունի անկէ — յուսով կը բարւոյնքին:

Անդրէ քարզամեց՝
ՅՈՒՎ. ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

•HOOSHARAR•
Փետր. 1961

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՃԱՇԿԵՐՈՅԹ
ՀԱՆԴԵՍՈՎ ՄԸ ԿԸ ՄԵՍՈՒՐԷ
ՎԱՐԴԳԷՍ ՄԿՐՏԻՉԵԱՆԸ

Ամենայն Հայոց Հայրապետ կոնգակով եւ Եփեսոսով կը պարգևատրէ բարերար:

Հ. Բ. Ը. Միութիւնը մեծարանքի ճաշկերոյթ — հանդէսով մը պատուեց բարերար Տ. ք. Վարդգէս Մկրտիչեանը. անոր Ամենայն Հայոց Հայրապետութեան Ս. Գրիգոր Լուսաւորչի Ա. Կարգի Շքանշանի արժանանալուն առթիւ. Կիրակի, 14 Յունուար 1962 երեկոյեան ժամը 7ին, Հօթել Սթէթ-լըր — Հիթընի մէջ, Նիւ Եօրք որուն մասնակցեցաւ 300 հասնող բազմութիւն մը, Նիւ Եօրքէն, Նիւ Ճըրզիէն, Պոսթընէն, Տիթթոյթէն և այլ քաղաքներէն:

Մտփերու տակ սրահէն ներս մուտք գործեցին և պատուոյ սեղանին շուրջ տեղ գրաւեցին Բարերար Տ. ք. Մկրտիչեան, Ամերիկահայոց Առաջնորդ Գեր. Տ. Սիոն Արքեպիսկոպոս, Հ. Բ. Ը. Միութեան Նախագահ Ալեք Մանուկեան Ընդհ. Տնօրէն Գ. Կիրակոսեան, Ամերիկայի Կեդր. Յանձնաժողովի Նախագահ Երուսանդ Մովսէս, Առաջնորդական Փոխանորդ Հոգւ. Տ. Միւռոն Մ. Վրդ., Վեր. Ա. Պետրիկեան, Ռիչըրտ Կրէկըրի, Ռիչըրտ Տորեան Տիկ. Մարկրիթ Քիմպրի և Օր. Աղաւնի Եկէշեան:

Ընթրիքը սկսու և Ամերիկեան Ազգային Երգով, զոր երգեց Վարուժան Արսլանեան, և Առաջնորդ Սրբազան Հօր աղօթքով:

Հանդէսին բացումը կատարեց Պր. Մովսէսեան, որ ներկաները ողջունելէ ետք, ըսաւ թէ անցեալին Կեդրոնական Յանձնաժողովը իր քննադատանքի ու երախտագիտութիւնը յայտնած է Տ. ք. Մկրտիչեանին, իր նիստերուն մէջ և այլ առիթներով. սակայն հիմա հրապարակաւ կը մտաուցանէ իր երախտագիտական զգացումները: Ապա, Պր. Մովսէսեան ներկայացուց օրուան սեղանապետը, Պր. Ռիչըրտ Կրէկըրին. որ ձեռնհասօրէն վարեց հանդէսը եւ, իր կարգին, պատշաճ բառերով ներկայացուց յայտագիրին մէջ բաժին ունեցող անձերը:

Առաջին խօսող եղաւ Ընդհ. Տնօրէն Պր. Գ. Կիրակոսեան որ ոգեկոչելով Ազգային

Բարերար Աղա Կարապետ Մելգոնեանի մէկ յուզիչ որոտայայտութիւնը, որոյ ահ բաղձա՞ք կը յայտնէր որ իր հիմնած Մելգոնեան Հաստատութիւնը, Կիրոսոսի մէջ, ըլլար ազգին համար մարդ, առաջնորդ պատրաստող կրթարան մը, Պր. Կիրակոսեան ըսաւ թէ «Հայուն դարաւոր, անմահ հոգին էր որ կը պոսթկար Բարերարին մէջ և ահա՛ այցի էր եկեր համակ համեստութիւն եղող գիտնականի մը», որ իր հաստատած ուսանողական հիմնադրամով նոյն նպատակին կը ձգտէր, — ազգին համար մտաւորական ուժեր պատրաստել:

Անգլերէն լեզուով խօսեցան Տիկ. Մարկըրիթ Բիմպըլ և Պր. Ռիչըրտ Տորեան. առաջինը՝ «Տոքթ. Մկրտիչեան հայ ուսանողներու բարեկամը», և երկրորդը՝ «Տոքթ. Մկրտիչեան, գիտնականը» նիւթին շուրջ, ցոյց տալով անոր հոգածու վերաբերմունքն ու ներողամիտ ոգին հայերիտասարդներուն հանդէպ, և ներկայացնելով անոր գիտական նուաճումները, ըրած գիւտերուն, գրած ուսումնասիրութիւններն ու գիրքերը, որոնք նորութիւններ էին հանդիսականներուն համար:

Յայտագրէն գուրս ելոյթներ ունեցան Վեր. Պետիկեան և Օր. Եկէնեան (իբրև հայրենակից բարերարին) որ նաև հատուածներ կարդաց «Մկրտիչեան Սաներ»էն և ազդայիծներէն եկած շնորհաւորական նամակներէն. իսկ ժամանակի սղութեան պատճառով Պր. Կրէկըրի գոհացաւ մաղթանքի հեռագիրներ ճամբած Հ. Բ. Ը. Միութեան մասնաճիւղերուն, ազգային մարմիններու և անձերու անունները տալով:

Վերջին խօսողը եղաւ Հ. Բ. Ը. Միութեան Նախագահ Ալեք Մանուկեան, որ բոլոր ներկաներուն սէրն ու երախտագիտութիւնը յայտնելէ ետք Տոքթ. Մկրտիչեանին ըսաւ թէ անոր «ազգօգուտ գործերն ու օրինակելի անձնաւորութիւնը աւելի բարձր կը վկայեն իր մասին քան մեր ըսելիք խօսքերը»: Անդրադառնալով Բարերարին հաստատած կէս միլիոն տալարի հիմնադրամին, Պր. Մանուկեան շնչեց թէ Տոքթ. Մկրտիչեան ըրած է աւելի թանկագին նուէր մը: Անիկա իր սիրտն ու հոգին անվերապահօրէն կապած է Հ. Բ. Մ. Միութեան՝ որուն ծառայելը իր գլխաւոր hobby

է. այսինքըն՝ իր ամենէն շատ սիրած զբաղումը: Յարգելի Նախագահը, Միութեան բոլոր մարմիններուն և անդամներուն կողմէ շնորհաւորելէ ետք սիրելի Բարերարը, կոչ ըրաւ ներկաներուն և բոլոր հայերուն, որ հետեւին Տոքթ. Մկրտիչեանի օրինակին, գան ու միանան Հ. Բ. Ը. Միութեան մեծ ընտանիքին:

Կարգը եկած էր պարգեւատրութեան, հանդիսականները յոտնկայս ունկնդրեցին Ամենայն Հայոց Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վաղգէն Ա.ի օրհնածիր կոնգակին ընթերցումը, զոր կատարեց Միւսոն Մ. Վարդապետ, որով Վեհափառ Հայրապետը սիրով կ'ողջունէր, իր հայրական օրհնութիւնները կուտար պատուական Հայուն և առ ի գնահատութիւն անոր մեծ բարերարութեան՝ կը պարգեւատրէր Ս. Գրիգոր Լուսաւորչի Ա. Կարգի Աղամանդակու Շքանշանով: Առաջնորդ Սրբազան Հայրը, իր կարգին, գնահատելով Տոքթ. Մկրտիչեանի Բարեգործականին և Առաջնորդարանին մատուցած ծառայութիւնները, անոր կուրծքը զարդարեց Հայրապետական պատուանշանով:

Ամենէն ետք, հանդիսականներու խանդավառ ծափերու տակ, Տոքթ. Մկրտիչեան ըրաւ իր երախտագիտութեան և շնորհակալութեան խօսքը, ուղղուած Ամենայն Հայոց Հայրապետին, Հ. Բ. Ը. Միութեան Նախագահին և Միութեան բոլոր մարմիններուն, կարգադիր յանձնախումբին ու հայ մամուլին, որոնք պատուեցին զինքը:

Այս առթիւ, Կեդրոնական Վարչութեան և Կեդրոնական Յանձնաժողովին կողմէ, Տոքթորին տրուեցան համեստ այլ արտագին նուէրներ: Անոնց մաս կը կազմէր նկարիչ Տիկին Սալբի Մալեանի պատրաստած Տոքթ. Մկրտիչեանի գիմանկարը. այս յաջող գործը ցուցադրութեան դրուեցաւ պատուոյ սեղանին աջ անկիւնը, ետտանիի մը վրայ, հանդէսի ամբողջ տեւողութեան: Նոյնպէս, Տոքթ. Մկրտիչեանին յանձնուեցաւ մազաղաթանմանակ սիրոյ, բարեկամութեան և յարգանքի գիր մը, իբր յիշատակ, որուն վրայ ստորագրած էին բոլոր հանդիսականները: Սոյն գեղարուեստական էջը պատրաստած էր մեր արուեստագէտ բարեկամը, Պր. Աւետիս Բիրիչեան:

Հանդիսութեան գեղարուեստական բաժ-

ՊԱՏԿԵՐ՝ Հ.Բ.Ը.Մ.Ի ԳԱՅԻՐԷԻ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ

Ամփոփ գրիներով կը նեկայացնենք այս շրջանին մեր երիտասարդներուն ունեցած գործունէութեան պատկերը:

1961 տարւոյ Դասախօսութեանց օտար սկսաւ 13 Հոկտեմբերին. Թարգմանչաց Տօնին օրը. բանախօսեց տաղանդաւոր արուեստագէտ երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխան. գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր. տեղի ունեցաւ պատուասիրութիւն:

20 Հոկտեմբերին բանախօսեց Տիար Յակոբ Տիգրանեան՝ բժօկական համալսարանէն: Նիւրն եր՝ Վիտաբուժութեան կանոնները:

3 Նոյեմբերին սկսեալ Հայկական Ճարտարապետութեան մասին յաջորդական երեք դասախօսութիւններ տուաւ յայտնի նարտարապետ Տիար Արտաշէս Օրագեան:

15 Դեկտեմբերին սկսեալ գրող եւ բեմի վաստակաւոր գործիչ *Պորէն Տէտեան*՝ նոյնպէս յաջորդաբար երեք դասախօսութիւններով՝ հանդէս եկաւ եւ խօսեցաւ Հայ երգիծանքի մասին:

16 Յունուարին՝ երիտասարդ նուիրեալ մը՝ Պր. Արա Պոյաճեան, խօսեցաւ Նուպիսյ Հնութեանց մասին:

26 Յունուարին Նուպարեան Վարժարանի բազմաբնակարան Տնօրէն Տիար Տիգրան Պապիկեան տուաւ իր փնտռուած գիտական դասախօսութեանց վերոյիշեալ օտարէն դուրս կատարուեցան դեպի Հելլոսան և Բուրգերը զբօսական պայուսներ: Ամանորի առթիւ Հանդէս-Թեյասեղան, իսկ Ռամասան պայուսով եւստեայ արձակուրդի պատենութեամբ՝ զբօսապատյալ զէպի Ալեքսանդրիա:

նին իր սիրայօժար մասնակցութիւնը բերաւ Կոմիտաս Երգչախումբը. զեկավարութեամբ Պր. Իսահակ Արքայաճեանի և դաշնակի ընկերակցութեամբ Մարկրիթ Յարութիւնեանի, մէջ ընդ մէջ երգելով Կոմիտաս Վարդապետի կտորները:

Մեծարանքի այս երեկոն, որ ամէն ձեւով յաջող էր և ներկաները գոհ ու խանդավառ, փակուեցաւ «Տէր Կեցո» մաղթերով և Առաջնորդ Սրբազան Հօր Պահպանիչով, ժամը 10:45 ին, որմէ ետք հանդիսականները, շարան շարան, քացին իրենց շնորհաւորութիւններն ու բարեմաղթանքը մատուցեցաւ Տօնք. Մկրտիչեանին:

սախօսութիւնը՝ ա Հիւլէի Ոյժի սին, որ Երեւանսարդաց Վարչութեան խնդրանքին վրայ տարուեցաւ անբողոք երեք օտար եւ վերջացաւ ազատ հարցումներու յաջորդական երկու երեկոյթներով, որոնք մեծ հետաքրքրութիւն ստեղծեցին:

6 Փետրուարին երգապահան Համալսարանի բժօկական ներքին ուսանողներէն Կարպիս Մերճանեան բանախօսեց Վիթամիններու մասին:

12 Մարտին, Վարդանանց Տօնին առթիւ մեր երիտասարդութիւնը հանդիպում ունեցաւ ունեցողիւ Վեր. Վահան Թութիկեանի հայրենասունց նաոր՝ Բաջն Վարդանի հերոսական կեանքը պատմեցաւ: Գործադրուեցաւ գեղարուեստական խնամեալ յայտագիր, որուն յաջորդեց պատուասիրութիւն:

23 Մարտին, Մայրերու Տօնին առթիւ, Տիկին Իսկուհի Տարեան տուաւ իր տաս խնամեալ մեկ դասախօսութիւնը, որուն յաջորդեց գեղարուեստական յայտագիր եւ պատուասիրութիւն:

30 Մարտին, երիտասարդ բժիշկ եւ վիրաբոյժ Տօնք. Ժան Գեղամ Հայրապետեան իր անկրանիկ դասախօսութիւնը բրաւ մեր երիտասարդներուն. նիւր ունեցաւ Նախնական խնամքները: Յարգելի բժիշկին այս օգտագոյն բանախօսութիւնը բազմազրուած՝ ցուցեցին մեր ունեցողիներուն:

Դասախօսութեանց վերոյիշեալ օտարէն դուրս կատարուեցան դեպի Հելլոսան և Բուրգերը զբօսական պայուսներ: Ամանորի առթիւ Հանդէս-Թեյասեղան, իսկ Ռամասան պայուսով եւստեայ արձակուրդի պատենութեամբ՝ զբօսապատյալ զէպի Ալեքսանդրիա:

Մարտ 7ին, Չորեքշաբթի առաւօտ, Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան գրասենեակը ժամագրովայր հանգիսացած էր մեր երկսնանկամներու եւ խումբ մը ձեռնակներու, որոնք փութացած էին Երիտասարդացի դեպի Ալեքսանդրիա կազմակերպած զբօսապայուսներով. ժամը 7ին արդէն նախալ ելած էին՝ տաս ոգեւորեալ քաղաքներու: Խումբը կ'առաջնորդէր Օր. Ով. Գարսաբեան, որ իր լաւագոյնը բրած էր բոլորին հանգիստ երթելէ կը ապահովելու համար: Կեսօրուան մօտ, արդէն ժամանած էին մեր պանդոկը, ծովափին վրայ թիւ 119, Պլիւ Ռիվիէրա

Օթէլ (սեփականութիւն մեր բարեկամներէն
 տար Գրիգոր Ներսէսեանի) ուր վայելեցինք
 ընթացական խնամք մեր ետեւայ բնակու-
 րեան ընթացին: Նոյն գիտերն իսկ ժամադ-
 րուած էինք Ալեքսանդրիոյ Լ.Բ.Ը. Միու-
 րեան Գան աբ Սէզարի ակումբը, ուր յայտնի
 երգիչ տար Յակոբ Զիլիկերեան, տար
 Փիլիկեանի գաւենակի ընկերակցութեամբ՝
 մեզի հրամցուց հայ երգերու նոյն յայտարար
 մը, զոր ըմբոսխնայեցինք մեծ ուրախութեամբ:
 Յաջորդ երեկոյ՝ Լիմպոսաբքի 8 Մարտ,
 հաւաքուեցանք Տիգրան Երկաթի մէջ, ուր
 կազմակերպուած էր Մտակութային հանդէս
 մը, մասնակցութեամբ զոյգ կազմակերպու-
 րեանց երիտասարդական ուժերուն: Խուռն
 բազմութիւն մը եկած էր ողջունելու երի-
 տասարդութեան այս ելոյթը: Ալեքսանդրիայ
 Ուսանողացի ասեմայեան տար Կարապետ
 Նանարեան, հաւաքոյթը բացաւ գեղեցիկ,
 նառով մը: Օրիորդներ՝ Լիլիանիկ Տօնէլեան
 Երեւանին, Աննա Գիւտկանեան - Լիլ Անոյշ
 Հայաստանին - եւ Անահիտ Օրջանեան - Կը-
 առնիկ - յաջորդաբար արտասանեցին: Օրիորդ
 Վերա Հասցունի իր բնուած ձայնով զարմեալ
 մեզի լսելի բնա իր նախասիրած երգեր՝
 Լիլ Անոյշ Տաւիղը եւ Սիրոյ Կրակը, որոնք
 բուն ծափերու արժանացան: Քառորդ
 ժամուան դադարէ մը ետք, մեր երիտասարդացը
 մեծ յաջողութեամբ բեմադրեց Պաշտօնս
 Խոսքայ է զաւեսք, մասնակցութեամբ
 Տեառք Աւետիս Մինասեանի զինուոր, Վա-
 րուժան Պետրոսեանի սպայ, Օրիորդ Վերոն
 Ծկուսեանի քանակիկին, Միհրան Ծիհանեանի
 ծառայ. Յուսարար էր Տիգր Միքայէլ Ժամ-
 կոչեան:

Ներկայ հանդիսականները ցանց գնահա-
 ցեցին մեր համեստ քաղցրախումբին խաղա-
 կութիւնը եւ ջերմ ծափերով վարձատրեցին:
 Բեմադրութենէն յետոյ սկսաւ պարահանդէ-
 սը, որ մեծ ոգեւորութեամբ օտարուցակուե-
 ցաւ մինչեւ ուժ գիտեր:

Արտաւարտուիմք Ալեքսանդրիոյ մէջ այ-
 ցելեց Մոնթազա, Ռասէլիթինի պալատը,
 Անթօնիատիասի պարտէճը եւ Ապուքիր
 արուարձանը:

Ա. Ե.

ՄԵՐ ԹԱՏԵՐԱԳԻՐՆԵՐԸ

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ

(ՄԱՀՈՒԱՆ 50 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ)

Լ.Բ.Ը. Միուրեան Գահիրէի Մասնաժողովը
 Մանուկ Ֆոնտին ի նպաստ իր տարեկան ծնու-
 նարկին համար ընտրեց Գ. Սունդուկեանի
 «Պէլաօ» թատերախումբը, կազմակերպութեամբ
 զերասանուհի Տիկ. Ա. Օհանեանի: Այս
 առթիւ՝ հանձնարով կը հրատարակենք այս
 յօդուածը: ԽՄԲ.

Նա մինչեւ վերջ պնդում էր, թէ ի-
 րենց գերդաստանը ազնուական ծագում
 ունի: Սակայն, իրականում, նրա հայրը
 էջմիածնի հարկատու-ձորան էր: Նա տար-
 ուած էր ազնուական հովերով, սիրում էր
 աստիճան, մեծարանք: Սակայն հոգու խոր-
 քում աշխատաւոր էր, թէեւ մտաւոր
 Բայլում էր Թիֆլիսի փողոցներով թան-
 կարժէք մուշտակը հագին, կարակուլի փո-
 փոխը թեք դրած, ձեռնոցներով ու ձեռ-
 նափայտով: Այդ ձեռնափայտը, նրա անձ-
 նական շատ իրերի հետ, մինչեւ օրս պահ-
 ւում է Հայաստանի թատերական թան-
 գարանում: Ողորդ ու ընտիր ձեռնափայտ
 է. բռնատեղը՝ թատերական դիտակ. վեհա-
 շքեք պաշտօնեայ է մոլի թատերասէր: Նըս-
 տում էր շքեք ու մեծ գրասեղանի մօտ,
 որ ծանրաբեռնուած էր արծաթազօծ թա-
 նաքամանով, աւազաթասով ու աւազի
 դալով, արձանիկներով ու մոմակալնե-
 րով: Սակայն այդ նոյն գրասեղանի վրայ
 շունչ ու մարմին էին առնում հողաբայր
 գործաւորները, արհեստաւորներն ու կին-
 տօները:

Սիրում էր հաճոյախօսութիւններ անել
 տիկիններին, համբուրել նրանց ձեռքերը
 և երբեմն աչքի տակով նրանց նայել ոչ
 այնքան հայրական հայեացքով: Սակայն
 արքութիւն էր նրա համար ընտանիքը, ա-
 ուանց «ջան» չէր դիմում սիրելի կնոջը՝
 Սոֆիի, և նրա հոգում ու գրչի տակ ծնւում
 էին մաքուր ու անարատ կերտուհիներ:

Պետերբուրգում ուսանելու տարիներին
 կարդացել էր Շէյքսպիր, Կեթէ, Շիլլեր,
 քաջ գիտէր իտալերէն, լատիներէն, ֆը-
 րանսերէն, ռուսերէն, լսել էր իտալական
 ու գերմանական օպերաներ: Սակայն մե

ծագումն հասնողով պատշգամբում նստած թառ էր նստագում կամ Օրթաճալայի այգում, ընկերների հետ Գաի արհիւն քէֆ էր անում զուգանայով և արցունքն աչքերին լսում Սայաթ Նովայի երգերը...

Այդպիսին էր նա՝ մեծագոյն հայ դրամատուրգը, որ մեծագոյնը մնաց:

Երբ աւարտուեց Պետերբուրգի կամալսարանն ու վերադարձաւ Թիֆլիս, դեռ Սուենգուկով կաւրի էր և մտքով անգամ չէր անցնում թատրոնի նուիրուել, թէեւ տեսել էր հռչակաւոր Կարաթէքինին ու Շչեպկինին, հիացել նրանց խաղով: Նրան թիֆլիսում սպասում էր բանաւոր թարգմանչի պաշտօնը՝ Կովկասեան փոխարքայի գրասենեակում: Միաժամանակ երկրաչափութիւն էր դասաւանդում Ներսիսեան դպրոցում: Սակայն շուտով նրան հետացնում են ե՛ւ մէկ ե՛ւ միւս պաշտօնից: Հաւանաբար հիւսիսում յեղափոխական դեմոկրատների խմորած տրամադրութիւնները իրենց զգացնել էին տուել ու չէին վրիպել ցարական իշխանութիւնների ուշադրութիւնից: Նրան աքսորում են Դերբենտ:

Աքսորից վերադառնալուց յետոյ էլ երկաթուղային շինարարութեան վարչութեան նորաթուխ պաշտօնեան թատրոնին նուիրուելու տրամադրութիւն չէր ցուցարբերում: Նա միայն նայում էր շուրջը և թատրոնի օթեակից, իբր անտարբեր, դիտում այն ամէնը ինչ կատարւում էր բեմի վրայ: Իսկ բեմի վրայ բաւականին հետաքրքիր տեղաշարժեր էին կատարւում: Կեղծ դասական ոգով գրուած կիսապատմական ազգային ողբերգութիւնները՝ այդ բազմահեղինակ, բայց նոյն շապկի մէջ մտած «Արշակները», «Վարդան Մամիկոնեանները», «Սամուէլները», իրենց շնորհակալ դերը կատարելուց յետոյ սկսում էին երերալ: Նրանց կողքին, առանց պատկառելու, համարձակուել էր բեմ դուրս գալ ինչ որ «Դաւայ Ղազօ»: Յետոյ նորերը երեւացին «Ժլատը», «Նինոյի նշուիրը», և այլն, որոնք ճշմարիտ է, նոյնպէս այնքան էլ ամուր չէին կանգնում իրենց ոտքէն վրայ, սակայն մանուկներ էին: Կարող էին ճեղքուել ու ամրանալ:

Վերածնւում էր արեւելախոյ թատրոնը՝ եւս զարի 60 ական թուականներին:

Առաջաւոր մտաւորականութիւնը հողին էր յանձնում իր դարն ապրած խաղացանկը և բեմ էր հրաւիրում կենդանի մարդկանց, որոնք կարող էին խօսել ժողովուրդի հետ, իրական գոյներով պատմել այն ամէնի մասին, ինչ կատարւում էր շրջապատում, և ոչ միայն պատմել, այլև խարաղանել, մերկացնել, սովորեցնել:

Բուռն էր սգեւորութիւնը, և Սուենգուկեանը այլևս չէր կարող անտարբերութիւն ձեւացնել այն ժամանակ, երբ ներքուստ զգում էր, որ ինքն էլ ասելիք ունի: Բառասուններկուամեայ պետական պաշտօնեան որոշել էր խառնուել խենթ ջանելներին: Եւ նա արեց այն, ինչ արել էին «Դաւայ Ղազօ», «Նինոյի նշուիրը» կենցաղային վողկիւնների «Վահել» հեղինակ ներք՝ Փուղիեանն ու Տէր Գրիգորեանը: սակայն հետագայում ոչ մի Փուղիեան ու Տէր Գրիգորեան չկարողացաւ անել այն, ինչ նա արեց:

1867 թուականին էր, երբ Գաւրիլ Սուենգուկով դարձաւ Գաբրիէլ Սուենգուկեան: Թատրոն ներկայացրեց նոյնպէս կենցաղային մի վողկիւն՝ տեղական կեանքից — «Գիշերուայ սարբը խեր է»: Առաջին հերթին վերջնական մի հարուած էր տուել պիէսում անցեալի կղերական ու ազնուական դասն իդէալականացնող դրամատուրգիային: ապա անցել էր ժամանակակից կեանքի մի շարք ցաւոտ հարցերի վերահանմանը: Մտփոհարեցին պիէսի ներկայացումը, բայց աւելի շուտ՝ մտփոհարեցին կեանքի հինգերորդ տասնամեակը թեւակոխած նորելուկ դրամատուրգին, որը գլուխ էր տալիս և խոստումնալից ժպտում:

Սոստումը շուրջըց: Այս անգամ բեմ ելաւ այնպիսի հասուն մի կատակերգութիւն, ինչպիսին է «Սաթարայան»: Առաջին անգամ էր թիֆլիսցին ամբողջ խորութեամբ ու բազմակողմանիութեամբ տեսնում այն միջավայրը, ուր ծնուել ու ապրել էր ինքը: Կարծես առաջին անգամ էր տեսնում նա վայնասուղ գիշաչին, որի հետ ապրել էր կողք-կողքի և շահագործուել նրա կողմից, առանց պարզ պատկերացնելու, թէ ինչ է կատարւում: Թիֆլիսեան միջավայրի ծնունդ էր այդ վայնասուղ, սակայն հետագայում պարզուեց, որ նա ե՛ւ

կայ է ե՛ւ այլազգի, որ ապրում է նա ամենուրեք. ուր կան աշխատանքի մարդիկ: Առեւտրական բուրժուազիայի այդ հաւաքական ներկայացուցիչը Չամբախովը, իր ուրոյն փիլիսոփայութիւնն ունի, դրամի ուժով կարելի է գնել ե՛ւ սէր, ե՛ւ մարդկային արժանապատուութիւն, և ամէն ինչ: Դրանք բոլորը ապրանք են: Ապրանք է և նրա հարազատ ազգիկը, որին ամէն գնով ուզում է «սողացնել»: «Ախչկաս տեսիլիս, հաւնիլ իս, հիմի զնակոմիտ էլ իս ուզում, ջուխտ անկիս, յիս թաքցնելով ապրանք չուենեմ», — ասում է նա Մասիսեանցին. որը առաջուր մտաւորականութեան ներկայացուցիչն է համարւում ու Չամբախովի հակառակորդը: Առեւտուրն իր կանոններն ու փիլիսոփայութիւնն ունի. «Սափիլը վճարն է... Ասած է՝ ինչ երգիր գնաս, էն երգրի գրակը ծածկէ, կտէ: Արա, քեզ իմ հարցնում, էս մեր քաղկուժը վուր մէկու չըլին խափում, մէ օր կա՞նա մարթ ապրի՛, կա՞նա վուտը վուտի աւչիվը դնի: Տօ, ինչ գուզիս փեշակ ասա, ինչ գուզիս առուտուր ասա. մէկը կա՞, վուր առանց խափիլ ետլտ ըլի տանում իր բանը»:

Մասիսեանը, սակայն, այն ուժը չէր, որ կարողանար հակադրուել ու մերկացնել Չամբախովի նման «հին գայլին»: Սոււնդուկեանը շարունակում էր սեւեռուն շուրջը զննել. 1869 թուականին՝ «Էլի մէկ զոն»: Կատակերգութեան վերնագրից երեւում է, որ դարձեալ դրամատուրգի գազափարակիր հերոսը պարտոււմ է այն աշխարհում, ուր դրամը ամենահատու գէնքն է: Այստեղ արգէն առեւտրականին փոխարինում է միլիոնատէրը, որի անունն անգամ խորհրդանշական է՝ Բրիլանտով. ծիչդ է, նա այնքան պերճախօս չէ, որքան Չամբախովը, սակայն աւելի զօրեղ է՝ շնորհիւ իր գէնքի: Հարկաւոր է գէնքին գէնք հակադրել: Եւ Սոււնդուկեանը դրամի ուժին հակադրեց ճշմարտութեան, արդարութեան, ընգզմամբ ուժը: Այս անգամ դէմ յանդիման կանգնած էին հալալ քրտինքով իր օրուայ հացը վաստկող աշխատաւորը և հարուստ վաճառականը: Վերջինս այնքան էլ չի տարբերւում Չամբախովից, բայց այլ են յարաբերութիւնները: Այժմ կայ մէկը,

որը ի վիճակի է վաշխառուի փիլիսոփայութեանը հակադրել՝ իր աշխատաւոր մարդու փիլիսոփայութիւնը: Չկնորս Պեպօն սովոր է իր ձեռքով իր ապրուստը վաստակել, և ազնիւ ապրելակերպը դրոշմ է նրան ազնուօրէն վերաբերուել կեանքի երեւոյթներին: Նա չի կարող հանդուրժել ոչ մի կեղծիք:

Տուեալ դէպքում մուրհակը միջոց է և ոչ նպատակ: Սոււնդուկեանի հերոսը պայքարում է ոչ թէ իր մուրհակի դէմ ստանալիք դրամի համար, որ պէտք է վճարէր Ջիմզիմովը և չէր վճարում, այլ պատուի ու արդարութեան համար: Հայ գրականութեան մէջ աշխատաւորի առաջին զօրեղ բողոքն էր դա, որ հնչեց «Պեպօ» կատակերգութիւնում: «Էս օսկէ պատիրը, վուր սարքիլ իս, ո՛ւմ փուղով... — ասում է Պեպօն Ջիմզիմովին, — հազար ինձ պէս ներուն թալնիլ իս, գա՞նա, քար ու կիրը միր արնով իս շաղղի. գա՞նա, դիփուճանց անկիրը արլաննովկա իս արի ու հիմի ծանր ու բարակ քիզ համա նսասած քեփի իսանում, էլի՛՞»: Կարեւորն այն է, որ Սոււնդուկեանը Պեպօյ և Ջիմզիմովի ընդհարման միջոցով իր դրական հերոսին հասցնում է այն գիտակցութեանը թէ Ջիմզիմովի անօրինութիւնը անպատիժ չպէտք է մնայ, որ վաղ թէ ուշ ինքը և իր նմանները արդար դատաստան են տեսնելու նրա հետ:

Գ. Սոււնդուկեանը հետագայ տարիներին գրեց նաեւ այլ կատակերգութիւններ («Բանդած օջախ», «Բաղնիսի պոխչա», «Ամուսիններ», «Սէր և աղատութիւն», «Կտակ»), գրեց արձակ երկեր սակայն «Պեպօն» մնաց ամբարշտանցելի: Այն դրամատուրգի գաղափարական և գեղարուեստական բարձրակէտն էր, և հայ դրամատուրգիայի բարձրակէտը: Առաջին իսկ ներկայացումից յետոյ (1871 թ.) Պեպօն դարձաւ թատերասէր հասարակայնութեան սիրելին, և պիէտը չուտով տեղ գտաւ վրաց ու ռուսական բեմում: Ըմբոստ ձկնորսի կերպարը խորհրդանշ. դարձաւ: Եւ պատահական չէ, որ Սոււնդուկեանը կտակաւ առաջարկում է արձան կանգնեցնել Պեպօյին, իսկ իր գերեզմանի վրայ՝ միայն մի սեւ քար դնել ու վրան գրել՝ «Գարբիէլ Սոււնդուկեան — համալս»:

Նա, որ ազնուական հովերով էր առուած այժմ պատիւ էր համարում իրեն՝ մշակ անուն կրել: Տարիքը չէր պատճառը, այլ ստեղծագործ հոգին, որ իջել էր մինչև ժողովրդի ակունքները և բարձրացել՝ իր հետ բարձրացնելով ժողովրդի կամքն ու ուժը մարմնաւորող հասարակ աշխատաւորին:

Առանց Սոււնգուկեանի անկնարին է հայ թատրոնի զարգացումն ու ամրապնդումը անցնել դարի 70-80 ական թուականներին և յետոյ՝ Նա հայ բեմը օժտեց հարուստ ներքնաշխարհ ունեցող հերոսներով, մեծապէս նպաստեց ռէալիստական խաղացանկի և խաղառէի հաստատմանը, բացարեց հասարական երեւոյթների ծալքերը՝ հասնելով

զաղափարական խոր ընդհանրացումներին՝
«Հին Թիֆլիսը, — գրել է Յ. Թուսանեանը, — երկու մեծ անուն է թողել — Սայաթ-Նովա և Գարրիէլ Սոււնգուկեան: Հարազատ Թիֆլիսի լեզուով, Թիֆլիսի շնչով, Թիֆլիսի սգով:

Եւ մե՛ն:

Ու անձնուէր մեծ Պեպօն կեանքի բեմի վրայ՝ մաքուր, յաղթական, Զիմզիմովի դէմ կանգնած իր հալալ աշխատողի կոչաւ ձեռքով կը զարկի մուրհակին և Թիֆլիսի բարբառով կ'որոտայ — Բու որտումը ի՞նչ է գրած... ու կը վարի իր ազնիւ կռիւը, ոչ թէ մուրհակի համար, այլ ճշմարտութեան համար, արդարութեան համար:

Սրեւան

ՍՈՒՐԷՆ ԽԱԶԱՏՐԵԱՆ

Վ Ա Ր Գ Վ Ս Ե Տ Ե Ր

Ուրախութեամբ կ'արձանագրենք հետեւեալ ամուսնութիւնները եւ կը ներկայացնենք մեր սրագիրն օնորհաւորութիւնները նորապսակ ամուսնեւուն, եւ անոնց ազնիւ ծնողաց:

ՕՐ. ԶԵՐՄԻՆԷ ԹԱՇԱՅԱՆ

եւ

ՊՐ. ԲԱՅՅԻ ԳԱԼՇԵԱՆ

29, Ապրիլ 1962

Աղեփսանգրիս

ՕՐ. ԱՆԱՀԻՏ ԱՅՆԱՃԵԱՆ

եւ

ՊՐ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵԱՄԱՅԵԱՆ

21, Յունուար 1962

Գահիրէ

ՕՐ. ՈՍԿԻՆԷ ՈՍԿԱՆԵԱՆ

եւ

ՊՐ. ՆՈՒՊԱՐ ԿՈՍՏԱՆԳԵԱՆ

29, Ապրիլ 1962

Լոս Անճելիս

ՕՐ. ԼՈՒՍԻ ԳԱԶԱՆՃԵԱՆ

եւ

ՊՐ. ԱՐԱՄ ՄՈՎՍԷՍԵԱՆ

4, Փետր. 1962

Գահիրէ

ՕՐ. ՔԼԱՐԱ ԽԱԶԵՐԵԱՆ

եւ

ՊՐ. ԱՐՄԱՆ ԱՐՄԲՈՒՆԻ

13, Մայիս 1962

Գահիրէ

Այս հրատարակութիւնը վճարովի չէ
Շնորհակալութեամբ կ'ընդունենք նուէրներ, մեր այս
ձեռնարկը աւելի նոյն եւ օտանկան բնծայելու համար:
— Ստանալու համար դիմել խմբագրութեան —